կանգնեցաւ սպատկեր Աստղիան, և 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի եդաւ պատկեր Արամազդայ, 'ի Բեթղէմէմ 'ի տեղին ծննդեանն Քրիստոսի տնկեցաւ անտառ Ադոնիսայ, և 'ի վերայ Մարոյն արձանն Ափրոդիտեայ: Ցետ կատարելոյ այսմ ամենայնի ժողովեցաւ եկեղեցին և եդին յաթոռ եպիսկոպոսութեան Երուսաղէմի զՄարկոս, զառաջին եպիսկոպոս 'ի հեթանոսաց հաւատացելոց: «Զառաջին օրինակ այսպիսի մեծապատուական միաւորութեան յարեւելս ցուցանէ եկեղեցին Քրիստոնէից դարձելոց 'ի Հրէութենէ յերուսաղէմ, որք էին 'ի հաղորդութեան միաբանութեան ընդ եկեղեցւոյն Գալիլեայ, Հրէաստանի և Սամարիայ: Ցետ կործանմանն Երուսաղէմի առ Ադրիանոս, այն իշխանութիւն մեծապատուական անց 'ի Կեսարիա Պաղեստինացւոց»: Պաս. Տէրէք. Հաս. Բ. 220:

Ցետ վախճանելոյ Մարկոսի յաջորդեցին զկնի միմեանց զԱթոռն եպիսկոպոսութեան՝ Կասիանոս, Պոպղիոս, Մաքսիմոս, Գայիոս, Սիմաքոս, Գայիոս Բ. Ցուլիանոս Բ. Կիպրիանոս, Մաքսիմոս Բ: Ի սորա գրոց Թէ՝ ուստի իցէ Հարն, և Թէ յԱստուածոյ ստեղծաւ Նիւթն, և Հատակոտոր բանք ինչ առ Որոգինեայ երեւին. յետ որոյ Անատոլիոս, Վաղէս, Դուղիքիանոս և ապա Նարկիսոս: Սա եկաց յԱթոռն եպիսկոպոսութեան Երուսաղէմի առաքինի և սքանչելի վարուք. ընդ որ նախանձեալ ոմանց չարադրդիւռ արանց չարախօս եղեն զնմանէ, և երդմամբ հաստատէին զբանս անհաստատութեան իւրեանց. մին երդնոյր Թէ այրեսցի հրով, եւ միւսն Թէ սպառեսցի մարմին նորա 'ի չարաչար կիզոյ հիւանդութեան և երրորդն խաւարել բիւրք աչացն, այլ նա համբերութեամբ իւրով յաղթեաց Թշնամեայ իւրոց. եւ զի սիրէր նա զվարս միանձնութեան, խոյս ետ յանապատս ինչ և Թագաւոր անդ, որոյ զտեղին ոչ ոք կարաց դիտել: Այլ դատաստանք Տեառն վաղ ընդ վոյթ հասին 'ի վերայ ամբարշտացն այնոցիկ. առաջինն այրեցաւ տամբք և աղդատհմանն իւրով 'ի կայծականց, երկրորդն անկեալ յախտ դժնդակ կերակուր եղեւ որդանց: Տեսեալ երրորդին զանցսն ընկերացն, խոստովան լինէր առաջի ամենեցուն ըզչարիսն զոր խորհեցան. եւ այնպէս լայր և կոծէր զանձն իւր մինչեւ խաւարեցան երկոքին աչք նորին: